դամենն երեք հարիւր բուրլի 35 կ. Նամակիս հետ ուղարկում ենք մէկ ծրարում ամփոփված պ. Յովհաննէս Հասան-Ջալալեանցի ձեռքով ամբողջ լիովին զումարը, խնդրում ենք յարգելի խմբագրութեանց ուղարկել ուր հարկն է և նուիրատուաց անուններն ու ազգանունները հրատարակել պատուական «Մշակ» լրագրով միջոցաւ 'ի միամտութիւն նուիրատուաց։

Հանգանակութիւնից ժողովեցաւ — եկեղեցու մէջ 34 ր. 10 կ.։

Մկրտիչ Տէր Մկրտչեանց 1 ր., Յարտութիւն Զուբրիդեանց 1 ր., Աչէքսանդր Դեսմէրքեանց 3 ր., Յովհաննէս Պետրոսեան 3 ր., Սեդրակ Հասան-Ջալալեանց 4 ր., Բաղրատ Շեխեանց 1 ր., Գրիգոր Մասումեանց 1 ր., Յովհաննէս Թիւրքիեան 5 ր., Ս. Փասպարանեանց 2 ր., Ս. Վասիլով 1 ր., Մ. Բարխուդարեանց 1 ր., Գ. Տէր-Վաղարեանց 3 ր., Խ. Բաղալով 2 ր., Ի. Հասան-Ջալալեանց 10 ր., տիկին Սօֆիա 5 ր., Կ. Կանդումեանց 3 ր., Կ. Դանիէլբէկեանց 1 ր., Ռ. Աղդումեանց 1 ր., Ռ. Աղթուրեի 3 ր., Կ. Կոկլիբերիոզէ (վրացի) 3 ր., Բ. Քաղարով 1 ր., Ա. Տէր-Դանիէլեանց 1 ր., Կ. Պալով 10 ր., Դ. Մելիք-Հայկազեանց 10 ր., Կ. Տէր-Ալեքսեանց (չուլալիզցի) 1 ր., Ե. Կարապետեանց 1 ր., Ի. Կիկալով 1 ր., Մ. Գեսմէրքեան 5 ր., Կ. Սամսիով (վրացի) 1 ր., Զ. Պլալով (ռուս) 1 ր., Կ. Կարվենաց (յոյն) 1 ր., Ս. Սարդարով 1 ր., Ա. Բաժրեւոր-Մելիքով 1 ր., Գ. Սարդարեանց 1 ր., Ց. Շեխեանց 3 ր., Կ. Բանայէ (յոյն) 1 ր., Գ. Եղիսէբեան (օրիորդ) 3 ր., Հ. Թիւրքիեան (տիկին) 1 ր., Ց. Աչեանակէ 1 ր., Գ. Տէր-Յովանիսեան 1 ր., Մ. Ազումեանց 1 ր., Ա. Մխիթարեան 1 ր., Գ. Զուբրիդեանց 1 ր. 50 կ., Ա. Զուբրիդեան (տիկին) 1 ր. 50 կ., Ա. Թիւրքիեան (տիկին) 2 ր., Ա. Մեղուորեան (օրիորդ) 3 ր., Բ. Վարդանեան (օրիորդ) 2 ր., Տ. Տէր-Յովսէփեան (տիկին) 2 ր., Ա. Աւետեան (օրիորդ) 1 ր., Ա. Մովսէսեան չուլեցի 3 ր., Խ. Խաչատեանց 1 ր., Մատեոս Յովհաննէսեանց 5 ր., Ս. Շարդով 1 ր., Ն. Մելիքով 1 ր., Մ. Նաղարով 1 ր., Յ. Բարլով 50 կ., Բ. Մարտիրոսեան 1 ր., Ն. Տէր-Ա-ռաքելով 1 ր., Խ. Սարքիսով 1 ր., Կ. Քէջարով 1 ր., Գ. Յովհաննէսով 50 կ., Յ. Հայրապետով 1 ր., Յ. Ռաքելով 1 ր., Մ. Ղաղարով 1 ր., Ս. Գէ-որգով 1 ր., Շ. Բարալով 1 ր., Գ. Ակօրով 1 ր., Ա. Աւետիով 1 ր., Ա. Յարութիւնով 1 ր., Ա. Նաղարով 1 ր., Մ. Հախնազարով 1 ր., Շ. Մատեոսի Աւետիով 1 ր., Մ. Պողոսով 1 ր., Զուռ-նայի Խուդայ 40 կ., Յ. Ակրոով 1 ր., Ս. Յարութիւնով 1 ր., Գ. Հախվերդով 1 ր., Հ. Մատեոսի Գէորքով 40 կ., Զ. Մովսով 1 ր., Գ. Աւագով 60 կ., Հայ ումն 55 կ., Ա. Մրգոեվ 60 կ., Հ. Ակրոով 40 կ., Բ. Բարդաղով 40 կ., Ա. Մովսով 50 կ., (Վերևի գրված 12 անձինք փոքրիկ հայ մշակներն են։) Ա. փայտեանց 6 ր., Ի. Ջերվիվով 1 ր., Ա. Ղազարով 3 ր., Մուսատֆայ Հաջի-Իրդահիմ Ոզլի (սատիկ) 1 ր., Զ. Ջանշաւերդէ (վրացի) 1 ր., Իբրահիմ Զեյնալ (տատիկ) 1 ր., Ա. Գեսմէրքեան 2 ր., Ա. Աստիկա (վրացի) 1 ր., Մ. Աղաթիա (վրացի) 2 ր., Ե. Ոսկանեան 1 ր., Ս. Նրսագէ (վրացի) 1 ր., Ա. Մարքարով (մշակ) 1 ր., Փ. Նրսագէ (վրացի) 50 կ., Մ. Խաչաթով 1 ր., Կ. Մեսարոսով (յոյն) 1 ր., Յ. Ներման Տրէայ 1 ր., Կ. Պատղոզակի (վրացի) 2 ր., Դ. Խեչրիով (վրացի) 2 ր., Ս. Դաւիթով 1 ր., Մ. Հասան Ջալալեանց 1 ր. 50 կ. (մանուկներ) Ն. Տէր-Յակոբեան 1 ր., Գ. Տէր-Յակոբեանց 1 ր., Ն. Ռաֆայէլեան (տիկին) 3 ր., Շ. Տէր-Զաքարեան (տիկին) 2 ր., Մ. Ռաֆայէլեան (տիկին) 2 ր., Ա.... 20 կ., Սահակ Աւիթեան 20 կ., Ի. Ռոշիեան 1 ր., Գ. Վանեցեան 5 ր., Ց. Վանիցեան 10 ր., Խ. Խուսրաղէ 5 ր., Աչէքսանդր Մելիք Հայկազեան (քիսուն ր.) 50 ր., Կ. Մուրադեան 3 ր., ընդհանուր զումարն է 300 ր. 35 կ.։

Մ. Տէր-Մկրտչեանց Բանանցեցի, Ս. Ն. Ջալալեանց, Գրիգոր Մասումեանց, Ի. Շեխեանց (չուլեցի), Յովհաննէս Թիւրքիա, Յովհաննէս Պետրոսեան, Ա. Քեսմէրքեան (արապիգօնցի)։

ՆԱՄԱԿ ՂԱՐԻՍԻ

16 մայրիի

Վերջապէս Ղարսը ազատվեցաւ մի զժուարութիւնից, այն է անոգորմ ցրտից և ձիւնից, մի չորք է համարեա, որ արդեն հատ անձրևներ են գալիս։ Քաղաքի սահմանը դրնացաւոց արեւելեան կողմի բարձրաւանդակներից ու սարդարքներից ձիւնը նպաւելով վասկ վասկ գալիս է և թափվում է «Տաւ-Բոզազ» անուանեալ հեղեղաձի մէջ, որը անցկենալով Ղարսաղի տակից, բաւական տարածութեամբ ծածկել է արդէն թիւրքաց երկոռ զերեզմանոցների մէջ տեղում գտնված հարթավայրը և բաղարի կէսը, այնպէս որ այն տեղում գտնված տախտակաչէն փոքրիկ կրպակները այդ գեղեցիկ լճակի երեսին լողալով և միւս կողմից մալականները փոքրիկ մակոյկների վրա նստած ջրի մակերևոյթի վրա փայտերը բռնալով, մեր երեսին կոր ու ցամաք Ղարսը մի ծովախեակ քաղաքի են նմանեցնում։ Մի առանձին տեսարան ես ներկայացնում է գեղը արեւմտեան կողմից իր անգին յորդոյութեամբ։ միով բանիւ Ղարսը այժմ մի կատարեալ Բերկրզդի է։ Այս ամենը լաւ, բայց սրբացնում գեռ բնակիչները չեն կարող ուրախանալ։ Նրանցից մեծ մասի մանաւանդ զիւղերում վերաբնակվող ալաչկերտցի գաղթականների դրութիւնը անտանելի է։ թէպէտ երկրագործ դասը ազատվեցաւ մի մեծ դժուարութիւնից (անասուններին կերակրելուց), այժմ տեղ-տեղ տեսարները հանդում արածանում են։ Անասունների մեծ մասը լաւ չը կերակրվելու պատճառով, սատիկ լղարված, կոշտնան, մնացածն էլ համարեա ոչխատացնելու համար անգործադրելի են։ Կենսական պիտոյքները հետզհետէ աւելի թանգանում են, ալիւրի պուդը այժմ 5 ր. 60 կոպէկով է ծախվում, գրրնձը 8 բուբլի, ձուն 7 կ. մինը, իսկ ցորեան և գարի ծախող բնաւ չը կայ։ Լսում ենք հաստատ աղբիւրներից, որ քաղաքային խնամակալութիւնը, մօտ 80,000 ր. փող է յանձնել ոստիկանութիւնին զիւղացիների վրա բաժանելու և այս օրերում մարդիկ էլ ուղարկել է այլ և այլ տեղերից սերմնացու ցորեան բերելու համար, որ նոյնպէս բաժանէ թէ Ղարսում և թէ գիւղերում բնակվող երկրագործներին։ Ալաչկերտցի գաղթականներից մի մարդ Սարիբէկը գիւղացի, մօտ 12 օր հաց չը գտնելով իր թշուառ ընտանիքի համար, անձարացած անցեալ օրերում իր հարիւր բուբլի արժողութեամբ լծու գոմէշը մարդում է և նրանով մի քանի օր կերակրում նրանց։ Զը գիտեմ ուր մնաց Ղարսում գտնվող ֆիրմանանդ նուիրատուների յանուն ազքատաց հաւաքված 2500 բուբլին, մինչև երբ պէտք է պահեն մանաւանդ պ. պ. անդամները, էլ ինչ օրուան համար է։

Այստեղի ուսուցչական խումբը գրաքարանի վարչութեան անդամների մասնակցութեամբ երկրորդ անգամ տուեցին ներկայացումն, մարտի 23-ին «Զէնանթ Ղենեաթ» և «Իս էլ քի մոցկլուութիւն» յօգուտ աղքատաց և ուռուց զարդոցն քաղաքիս, իսկ ապրիլի 7-ին ներկայացրին «Աբրակ Բ.» և «Գիշերուան սարքը խեր է» յօգուտ հայոց երկսեռ զարդոցների։ Առհասարակ բոլոր ներկայացումները անսպասելի յաջողութեամբ անցան. այս վերջին ներկայացումից գոյացած արդիւնքը հասնում է մօտ 180 բուբլու, ծախքը տնչան է։—Խնչպէս հաւատացանում ենք, լրիւալ պարտեները մասգիր են մօտ օրերումս մի ներկայացումն ևս տալ յօգուտ Վանայ սովելոց։ Արդէն պ. բժ. Ա. Ղազարեանցը և բժ. Գ. Կանմաճեանցը սկսել են ստորագրութեամբ նուէրներ հաւաքել յանուն Վարպետարանի սովելոց. բժ. Ղազարեանցի ժողովուրդի մօտ ունեցած համբաւոն չատ օգտակար ապացոյց է խոստանում նուէրներ հաւաքելում։ Ցնեք կարող լռել և չը յայտնել մեր առանձին խորին շնորհակալութիւնը բժ. Ղազարեանցին և նրա ազնուամիտ ամուսնուն, ինչպէս թատրոնների մասնակցելու գործում, նոյնպէս և ուսումնարանի, որոնք իրրև հարազատ լծակիցներ միշտ միասին են գործում, ձրի բոլորովին, վերառնելով առաջին տեսակ, վերջինը տեսչուհու պաշտօններ երկսեռ զարդոցներում, ուր ոչ սակաւ եռանդով են չարունակում գործել։

Ղարսում թագաւորում է և մի անմիխիթար եղերգի, որ նոյնպէս չէ կարելի չը յայտնել ցաւոք սրտի, այն է բնիկների ատելութիւնը կամ, պարզ ասենք, կոյր ժողովրդիւնը դէպի թատրոնական խումբը և հնարաւ մի երկու տպէտ և մոլեռանդ հոգեորականների ցուցով ենք, որ մեր թատրոնական խումբը կը յարգէ մեր տուած հաւատ խորհուրդը, պարնէն օրինէ կը համարի պարսկի լիմարաբանութիւնները և գործը եռանդով կը չարունակէ յիշելով հասարակաց առածը՝ «Ի՞նչ քացուց բեղամաղ չեն մնի»։

Օտարական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասեան ուսումնարանական հոգաբարձութեան միջոցով Ղարսեցիներին տասանգեր 54 բուբլ, որ ԲԱՌՈՒԻ թէպէտեան դպրոցի աշակերտները հանգանակութեամբ ժողովելով նուիրեցին յօգուտ Վանի սովամահներին։ Փոքր տասանգեր Նահանգապետ ապահովեցին։

Գ. Սմբատ Հովսեփեանց հասցրել է մեզ 15 ր. 30 կ. յօգուտ Վանի սովելոների, որ նա հաւաքել է հանգանակութեամբ։ Նուիրատուների անունները կը տպագրենք։

—

Ս. Պետերբուրգի «Herold» լրագիրը տասում է թէ մի անծանօթ անձն հարիւր բուբլ է տուել քաղաքապետութեանը յօգուտ Կովկասեան սովելոների։ Այս զումարը ըստ որոշման ուղարկված է Կովկասեան փոխարքայի գլխաւոր կառավարութեանը։

—

Կիրակի, մայիսի 11-ին, հայ սիրողները մի ներկայացումն տուեցին Աղբրունու թատրոնում։ խաղացին առաջին անգամ «Հայտարար Դատաւորի մասն կամ էդիպ» երեք գործողութեամբ, փոխադրութիւն Ց. Տէր-Գրիգորեանցի և նոյնպէս առաջին անգամ «Ցնոսս» վոդեվիլը, թարգմանութիւն Ց. Տէր Գրիգորեանցի։ Փոխադրութիւնները չատ լաւ են և խաղն էլ չատ լաւ անցաւ։ Հասարակութիւնը, որ բազմաթիւ չէր, չատ գոհ գոհար եկաւ թատրոնից։ Այդ թեթև, գիւրամարս և հանգանալի ներկայացումն հանգամանքներ կարում ոսմանտիական չիշողային պատկերի կոմիտէի ներկայացուցիչներին։ Անտրակտներում տիկին Տէր-Դրիգորեան-Դաւթեան մի քանի երգեր երգեց և մեծ ծափահարութիւններ ստացաւ։

—

Ստացանք Կ. Պոլսից մի քանի բրօշիւրներ ֆիքանտերէն լեզուով հայոց խնդրի վրա և Հայաստանում մոցնվելի վերանորոգութիւնների վրա Ադ գրոյկների վրա դարձեալ կը խօսենք։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի մէջ տիրած սարսափելի սովն ազգային և քաղաքական կարևորագոյն խնդիրն է մեզ համար, որովհետև ազգային գոյութեան խնդիրը վեր է ամէն քաղաքականութիւնէ և ամէն խնդրէ։ Մասամբ հենց նուաստութեան, մասամբ յոսի վարչութեան և մասամբ ալ երկրին անապատով վիճակին և աւազակարարոյ ցեղերու ասպատակութեանց պատճառաւ, իրաց այնպիսի վիճակ մ'երևան եկած է Հայաստանի մէկ մեծ մասին մէջ, որ մահացու հարուած մը տալ կը սպառնայ մեր հայրենեաց ազգայնոց, որք արդէն նախանձելի վիճակ մը չունին, և որոց պատերազմն ալ իր ամէն տեսակ չարութեամբ ծանր վնասներ տուած էր։ Իրողութիւնն այս է որ, ինչպէս անցեալ տարի կը փախցուէր, Վանայ նահանգին և Պայազիտի ու Արաշկերտի գաւառաց և Բասէնի գաշտին բը-նակիչներն, և մանաւորապէս երկրագործ Հայ ժողովուրդը սասակ սով մը կը տառապի ներկայ ձմերային եղանակին սկսելէն'ի վեր, և մինչև յառաջիկայ հնձոց ժամանակ, մանաւանդ մարտ և ապրիլ ամսոց մէջ, հասարակաց օգնութենէն զատ ապրուստի միջոց չունին։ Վանէն արձանագրուած անձի մը կողմանէ անցեալ օր մեզ ուղղեալ նամակ մը կը ծանուցուներ թէ Վասպուրականի 150 հազար Հայ ժողովուրդն այս ազանին ենթարկուած է։ Ոչ նուազ ցնորարիս է թէ այդ թուոյն երկու երրորդին մօտ Հայ ժողովուրդ մը նոյնչափ սարսափելի վիճակ մ'ունի Պարսկաստանի և Կարնոյ կողմն։ Այսպէս, քառորդ միլիոնի հասնող Հայ անհաւատ, իրարմէ աւելի կամ նուազ տարբերութեամբ, մահու և կենաց միջև կը տատանին Հայաստանի կարևորագոյն մասին մէջ։ Ոչ նուազ խղճալի է Ցիսարպէքիրի կողմն, և Քրդաստանի ներսի կողմերը գտնվող Հայոց և ուրիշ ժողովրդոց վիճակը։ Ռուսական Հայաստանի բնակիչք ալ լուսազոյն վիճակ մը չունին։

Այս է ահա ներկայ կացութիւնն, և ամէն մարդ, մանաւանդ ամէն Հայ, անշուշտ համբակ պիտի լլնի մեզ, երբ խնդրք թէ անց գարմանելի կարուսաք և տրկածք կրնան ծանգել եթէ ամբողջ ազգը վասնզին մեծաս-թիւնն ընդունելով անձնուիրաբար օգնութեան ձեռք չը կարկաւէ իւր սովալուկ ազգակցաց։ Արդարև, Վասպուրականի կողմը Հայ տարրն արդէն գատն հարուած կրած է ներկայ ազատէն։ Միայն մէկ անգամն գեղացի Հայոց չորս հարիւրի չափ ընտանիքներ, մասամբ թշուառութենէ և մասամբ Քրդաց ապարատութիւններէն ստիպեալ, թողեր իրենց ծննդեան վայրն և դէպի Պարսկաստան գաղթեր են, ուր թշուառագոյն վիճակ մը կը սպասէր իրենց։ Վասպուրականի ուրիշ կողմերէն ալ այսպիսի Հայկական գաղթականութիւնի տեղի ունեցեր են ամենաթշուառ պայմանաց ներքև։ Արդէն մեր ժամանակից պատմութեան գատն ձշմարտութիւններէն մին է, որ ամենայաջող պարգևալից մէջ կատարված Հայ գաղթականութիւններն անգամ նոյնքան կորուստներ եղած են ազգին՝ թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Թշուառութիւնն ու հարստահարութիւնք էին որ քառորդ դար առաջ Վասպուրականի մէջ Տզմուտ գեղի (Պէնտիմահի) և Ապաղայի գաշտին, միով բանիւ Վանայ և Պայազիտի միջև գտնուող այն գրաստային երկրին Հայ գեղացիներն ստիպեցին Ռուսիա գաղթել։ Իրաւ է որ այժմ այդ գեղացւոց մէկ մասն՝ իրենց Նոր հայրենեաց մէջ նիւթապէս կարելի եղածին չափ բարեբաստիկ կացութիւն մ'ունենալով հանդերձ կը հառաչէ իւր հայրենի երկրին համար, և ստուգիւ գիտեմք որ այդ Հայ գաղթականաց գոնէ մէկ մասն այժմ ամեն զոհողութիւն իւր աչքը պիտի առնուր վերադառնալու համար իւր հայրենի երկրին մի այնպիսի տեղն, որտ հին յիշատակներք միշտ քաղցր են ամեն Հայու։ Բայց գաղտնի ձեռք մ'արդէն օգուտ բաղած էր իրաց այնպիսի վիճակ մը զոր պարզամիտ միայն կրնան անհոգութեան կամ սոփրական գլուխց արդիւնք համարել։ որովհետև Հայ տարրին թոգած մէն մի մասնաչափ գեղն չուտով Քուրդ տարրին ձեռքն անցած է, որ այժմ զգուշորապէս հաստատուած է Վասպուրականի այդ հիւսիսային մասին մէջ (որ ինչպէս յայտնի է՝ Վարդանց պատերազմին յիշատակովը սրբագործեալ է), և ընդհանրապէս խօսելով, Վանէն Պայազիտ տանող երկիրը, կէս դար առաջ Հայ տարրին զբաղաբաղդն գիրքերէն մին, այժմ գրեթէ բոլորովին Քրդաբնակ գաւառ մ'է...։ Այս է ահա միջոց Հայկական թշուառութեանց և Հայկական գաղթականութեանց պատմութիւնը, թէ Բասէնի կողմն և թէ Արաշկերտի երանց վերայ։ Այս է ահա որ իրաւունք կուտայ Պ. Տ. Սարգսեանցի, այսինքն՝ Վանայ սովելոց յանձնախմբին քարտուղարին՝ երբ անցեալ շաբթու առ մեզ ուղղած մէկ կարևոր նամակին մէջ կըսէր...։ «Եթէ անմիջական օգնութիւններ չը հասան, մինչև ցարդ ազգային վերակենդանութեան մասին մեր ունեցած ջանք և յոյսերը կարող են թ' դերև երթալ... վասն զի երբ սարսանայ կամ մեռնի Վասպուրականը, Հայ և Հայաստան կը մեռնին...»

Ուստի, յանուն ազգային գոյութեան, որ այսպէս սարսափելի վտանգի մը մէջ կը գտնուի, յանուն Քրիստոնէական և սիրոյ, որք են զթութիւն և ողորմութիւն, յանուն մարդասիրութեան, որ միակ յոյսն է այժմ մեր հայաբաւոր տարաբաղդ ազգայնոց, յանուն վերջապէս մարդկային ամենափափուկ և սրմենսեմմ զգացմանց, որք տարակոյս չը կայ թէ պիտի յուզուին այդքան թշուառութեանց առջև, հրաւէր կը կարարեմք մեր բոլոր ազգայնոց, Թուրքաբնակաց և Ռուսաբնակաց, կամ ուր որ ալ լլնին, ինչ տեղ որ լլնին, ինչ ատիճանի կարողութիւն որ ունենան, հրաւէր կը կարարեմք, որպէս զի ներկայ վիճակին համեմատութեամբ յօգուտ փութան խրենց Հայաստանցի եղբարց և քոյրց, հարց և մարց, որպէս զի սոքա, վայրենական յուսահատութեան դէմ դնելու կարող լլնին,